

## ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Ներկայացվում է «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի խորհրդին*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2013թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը և այլ բացատրական ծանոթագրությունները:

### ***Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար***

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ՖՀՄՄ-ների: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը նրա կարծիքով թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

### ***Աուդիտորների պատասխանատվությունը***

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրինք աուդիտի միջազգային ստանդարտներով: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից և ներառում են նաև այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ և թե սխալներով: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերջիններիս ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, նպատակ ունենալով մշակել այդ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի համախմբված ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2013թ., ինչպես նաև այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն ՖՀՄՄ-ների:



**Թաթուլ Մովսիսյան**

Գլխավոր տնօրեն



**Ղուկաս Աթոյան**

Առաջադրանքի ղեկավար

27 հունիսի, 2014թ.,

ք.Երևան, Ամիրյան 4/6

**«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ  
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն  
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Միլիոն դրամ	31/12/13	31/12/12
<b>Ակտիվ</b>		
Հիմնական միջոցներ	47,625,875	47,630,432
Ոչ նյութական ակտիվներ	34,668	26,460
Կենսաբանական ակտիվներ	76	85
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	7,745	9,557
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>	<b>47,668,364</b>	<b>47,666,534</b>
Պաշարներ	173,757	146,177
Կանխավճար պաշարների և ծառայությունների համար	96,772	11,817
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	271,316	166,801
Կանխավճար շահութահարկի գծով	-	46,733
Կանխավճար հարկերի և պարտադիր վճարների գծով	12,399	7,545
Ավանդներ	81,091	71,060
Դրամական միջոցներ	1,249,345	1,157,038
Այլ ընթացիկ ակտիվներ	5,473	8,000
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>	<b>1,890,153</b>	<b>1,615,171</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>49,558,517</b>	<b>49,281,705</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		
Չբաշխված շահույթ	38,821,376	38,718,318
Պահուստային կապիտալ	169,894	169,894
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	<b>38,991,270</b>	<b>38,888,212</b>
Փոխառություններ	470	470
Հետաձգված հարկային պարտավորություն	6,147,438	6,230,135
Ակտիվներին վերաբերող շնորհներ	2,432,170	2,847,660
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>	<b>8,580,078</b>	<b>9,078,265</b>
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	53,098	62,824
Կանխավճար ծառայությունների համար	1,306,438	771,578
Շահութահարկի գծով պարտավորություն	24,641	5,316
Այլ հարկերի և պարտավճարների գծով պարտավորություն	165,774	73,669
Աշխատավարձի և այլ կարճ.հատուց-ի գծով պարտ-ություն	212,951	180,851
Եկամուտներին վերաբերող շնորհներ	219,590	215,682
Այլ պարտավորություններ	4,677	5,308
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>	<b>1,987,169</b>	<b>1,315,228</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>	<b>49,558,517</b>	<b>49,281,705</b>



Ռեկտոր  
Փոխվարչ

*Handwritten signature*

Ա.Սիմոնյան

*Handwritten signature*

Ռ. Գրիգորյան

**«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ  
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին  
համախմբված հաշվետվություն  
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

ՕՊՈ զրամ

**Շարունակական գործունեությունից շահույթ (վնաս)**

	2013	2012
Հասույթ	7,166,173	6,384,800
Վաճառքի ինքնարժեք	(6,429,861)	(5,782,006)
<b>Համախառն շահույթ</b>	<b>736,312</b>	<b>602,794</b>
Այլ եկամուտներ (ծախսեր)	15,588	(83,296)
Իրացման ծախսեր	(3,556)	(1,973)
Վարչական ծախսեր	(658,660)	(556,278)
<b>Գործառնական շահույթ</b>	<b>89,684</b>	<b>(38,753)</b>
Ֆինանսական եկամուտներ	65,012	52,965
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	5,916	8,900
<b>Շահույթ մինչև հարկումը</b>	<b>160,612</b>	<b>23,112</b>
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	(57,554)	43,992
<b>Ջուտ շահույթ</b>	<b>103,058</b>	<b>67,104</b>
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>	<b>103,058</b>	<b>67,104</b>

Ռեկտոր

Գլխավոր հաշվապահ



*Handwritten signature of A. Shikanyan*

Ա. Միմոնյան

*Handwritten signature of N. Ghigoryan*

Ռ. Գրիգորյան

**«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ**  
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն**  
**2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Միլիոն դրամ

	Կանոնա- դրական կապիտալ	Զբաղի- ված շահույթ	Պահուս- տային կապիտալ	Ընդամենը
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011</b>	-	39,467,682	169,894	39,637,576
Զուտ շահույթ	-	67,104	-	67,104
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-
<i>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց հարկերի</i>	-	67,104	-	67,104
Կապիտալի նվազեցում	-	(816,468)	-	(816,468)
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012</b>	-	38,718,318	169,894	38,888,212
Զուտ շահույթ	-	103,058	-	103,058
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-
<i>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց հարկերի</i>	-	103,058	-	103,058
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013</b>	-	38,821,376	169,894	38,991,270

Ռեկտոր

Ա. Սիմոնյան

Գլխավոր կազմակերպիչ

Ռ. Գրիգորյան



*Handwritten signatures in blue ink, including 'U. Simonyan' and 'R. Grigoryan'.*

**«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ**  
**Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն**  
**2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

‘000 դրամ	2013	2012
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
վաճառքներից	7,157,231	6,432,598
այլ գործունեությունից	1,646,740	1,637,593
նյութերի, ապրանքների ձեռք բերումից	(192,690)	(184,778)
աշխատանքների, ծառայությունների ձեռք բերումից	(670,028)	(645,403)
վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(6,452,456)	(5,062,623)
շահութահարկ	(74,195)	
այլ հարկեր, պարտադիր վճարներ	(100,272)	(930,837)
այլ	(552,712)	(576,737)
<b>Գործառնական գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>	<b>761,618</b>	<b>669,813</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>		
հիմնական միջոցների վաճառքից	8	2,073
տոկոսների ստացումից	63,489	57,170
ավանդների տրամադրումից	(70,000)	(55,006)
տրամադրված ավանդների մարումից	60,000	30,000
հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	(728,725)	(859,049)
<b>Ներդրումային գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>	<b>(675,228)</b>	<b>(824,812)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>	-	-
<b>Ընդամենը դրամական միջոցների գուտ հոսքեր</b>	<b>86,390</b>	<b>(154,999)</b>
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	5,917	8,633
<b>Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի</b>	<b>1,157,038</b>	<b>1,303,404</b>
<b>Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի</b>	<b>1,249,345</b>	<b>1,157,038</b>



*Handwritten signatures in blue ink.*

Ա.Սիմոնյան

Ռ.Գրիգորյան

**Ընդհանուր նկարագրություններ**

Սույն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն պատրաստված համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2013թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, սակայն չեն ներառում համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունները: